ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/39

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.04.2017թ. թիվ 03/26-3/6765-18 գրությամբ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02705726) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի 06.04.2018թ. թիվ 074Ա գրության հիման վրա, 11.04.2018թ. «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 06.04.2018թ. թիվ 074Ա գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Համաձայն «Թվային Հայաստան» հիմնադրամի և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի միջև 25.01.2018թ. կնքված ԹՀՀ-ՄԱԾՁԲ-18/1 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրի, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն իրականացնում է «Թվային Հայաստան» հիմնադրամի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների համակարգողի ծառայություններ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 10.02.2018թ. «Թվային Հայաստան» հիմնադրամի անունից գնանշման հարցման ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտարարվել է ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով համակարգչային սարքավորումների ձեռքբերման մրցույթ:

Չափաբաժին 3-ի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն և վերջինիս առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթեր:

21.01.2018թ. վերոնշյալ չափաբաժնի համար «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն armeps համակարգի միջոցով ծանուցվել է և նրան առաջարկվել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԹՀՀ-ՄԱԾՁԲ-18/1 ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սակայն «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը, որի պատճառով վերջինիս հայտը մերժվել է:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արթուր Բադալյանը:

3. «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն 16.04.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն մասնակցել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ 1-ից 4-րդ չափաբաժինների մասով:

21.02.2018թ. «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն info@armeps.am էլեկտրոնային հասցեից ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում առ այն, որ ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 3-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն և որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն վերը նշված պարտավորությունը կատարել է սահմանված կարգով և սահմանված ժամկետում, այն է՝ 23.02.2018թ. ժամը 16:54-ին էլեկտրոնային նամակով՝ ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ուղարկել է ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով հրավերում նշված՝ artur.badalyan@ekeng.am էլեկտրոնային հասցեին:

Այնուհետև, պատվիրատուից չստանալով նամակի ստացման հաստատում, և մտավախությամբ, որ նամակում կցված ֆայլերի մեծ տարողության պատճառով կարող էր առաջանալ տեխնիկական խնդիր, և այդ խնդրի պատճառով նամակը կարող էր չհասնել պատվիրատուին, «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն մի քանի անգամ փորձել է հեռախոսազանգով կապ հաստատել պատվիրատուի հետ նշված հեռախոսահամարով՝ 060-46-04-05, սակայն պարբերաբար զանգերը անպատասխան են մնացել:

28.02.2018թ. «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն ևս մեկ անգամ է ուղարկել նախատեսված փաստաթղթերը, սակայն պատվիրատուի կողմից դարձյալ պատասխան չի ստացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել որևէ խախտում, որ

պատվիրատուին նախատեսված փաստաթղթերը օրենքով սահմանված ժամկետում ուղարկվել են սահմանված կարգով, և դրանց պատվիրատուին չհասնելը տեխնիկական անկանխատեսելի խնդրի արդյունք են եղել, ինչպես նաև պատվիրատուի կողմից հեռախոսազանգերին և էլեկտրոնային նամակներին չպատասխանելու արդյունքն են եղել, «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն նաև հայտնում է, որ հայտերի բացումից հետո չի հրաժարվում ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգով նախատեսվող պայմանագիրը 3-րդ չափաբաժնի մասով և բարեխղճորեն կատարել պայմանագրով նախատեսված մատակարարումները ըստ վերոնշյալ պայմանագրի ժամանակացույցի:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Վան Մուրադյանը և Սարգիս Ահարոնյանը:

3. <u>ՍՑ-ԷՍ-2018/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2017թ. թիվ 03/26-3/6765-18 գրությունը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի 06.04.2018թ. թիվ 074Ա գրությունը և կից փաստաթղթերը, ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 19.02.2018թ. ժամը 09:00 նիստի թիվ 2 և 27.02.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 3 արձանագրությունները, «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2018թ. ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի և 28.02.2018թ. Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակի պատճենները.

«ԹՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» հիմնադրամի կարիքների համար՝ համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

• N3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

• N4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 19.02.2018թ. ժամը 09:00 նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ մասի՝

- 2-րդ կետով որոշել է ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին:

- 3-րդ կետով որոշել է՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետը, ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

հրավերով սահմանված էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 21.02.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն ծանուցվել է:

Հանձնաժողովը 27.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստին թիվ 3 արձանագրությանբ արձանագրել է, որ 21.02.2018թ. ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն, «Armeps» համակարգի միջոցով ծանուցվել է և առաջարկվել է նույն ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկյացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ 27.02.2018թ. դրությամբ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշել է մերժել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից որակավորման փաստաթղթերը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին չհասնելու պատճառը հանդիսացել է սխալ էլեկտրոնային հասցեին ուղարկելը, մասնավորապես՝ Ընկերությունը նշված փաստաթղթերը ուղարկել է ոչ թե Հրավերում նշված «artur.badalyan@ekeng.am» էլեկտրոնային փոստի հասցեին, այլ՝ artur.badalyan@eekeng.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ, որպես ապացույց Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց էլեկտրոնային փոստի հասցեից արտատպված՝ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2018թ. «artur.badalyan@ekeng.am» էլեկտրոնային փոստին կրկին ուղարկված նամակը:

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2018թ. «artur.badalyan@ekeng.am» էլեկտրոնային փոստին ուղարկված նամակի ուսումնասիրությունից պարզվեց, որ 23.02.2018թ. նամակը Պատվիրատուին չհասնելու պատճառը կապված է եղել սխալ էլեկտրոնային փոստի՝ artur.badalyan@eekeng.am, հասցեին ուղարկելը:

Ընկերության ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ էլեկտրոնային հասցեն, որին ուղարկվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, հնարավոր է իրենց կողմից սխալ է նշված եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-

ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:
- 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուի էլեկտրոնային փոստին 23.02.2018թ. ուղարկված նամակը Պատվիրատուին չհասնելու պատճառը կապված է եղել սխալ էլեկտրոնային փոստի՝ artur.badalyan@eekeng.am, հասցեին ուղարկելը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն՝ Հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.04.2018թ. «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02705726) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**